ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի հունիսի 20-25-ը քաղաք Մանիլա (Ֆիլիպինների Հանրապետություն) գործուղման մասին

1. **Անուն, ազգանունը՝**

Մեխակ Ապրեսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Քաղաք Մանիլա (Ֆիլիպինների Հանրապետություն), 2017թ. հունիսի 20-25-ը:

4. **Գործուղման նպատակը՝**

«Կայուն զբոսաշրջության զարգացման» տարվա շրջանակներում Ֆիլիպինների Հանրապետության կառավարության և ՄԱԿ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՄԱԿ ԶՀԿ) հետ համատեղ Մանիլայում կազմակերպվող ՄԱԿ ԶՀԿ «Կայուն զբոսաշրջության գնահատում» խորագրով զբոսաշրջության վիճակագրության 6-րդ միջազգային համաժողովին մասնակցություն:

5. **Քննարկված թեմաները՝**

Այցի ընթացքում քննարկվեցին հետևյալ հարցերը.

- ՄԱԿ ԶՀԿ վիճակագրության մեթոդաբանությունը՝ կապված առանցքային հասկացությունների, սահմանումների, դասակարգումների և ցուցանիշների հետ, որոնք այժմ դիտարկվում են որպես զբոսաշրջության վիճակագրության հիմք,
- զբոսաշրջության քաղաքականության մշակման և իրականացման համար վիճակագրական տվյալների կարևորությունը,
- կայուն զբոսաշրջության գնահատման համար վիճակագրական հիմքերը և կառուցվածքը,
- տնտեսական և բնապահպանական ոլորտների կապը կայուն զբոսաշրջության զարգացման համար,
- զբաղվածության և սոցիալական այլ ոլորտների գնահատումը կայուն զբոսաշրջության զարգացման գործում,
- զբոսաշրջության մոնիթորինգի ցուցանիշները,
- կայուն զբոսաշրջության տվյալների աղբյուրները և ստացման եղանակները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Այցի ընթացքում տեղի ունեցան հանդիպումներ.

- ՄԱԿ ԶՀԿ Գլխավոր քարտուղար Թալեբ Ռիֆաիի հետ,
- ՄԱԿ ԶՀԿ գործադիր տնօրեն Կառլոս Վոգելերի հետ,
- ՄԱԿ ԶՀԿ գործադիր տնօրեն Մարսիո Ֆավիլայի հետ,
- ՄԱԿ ԶՀԿ զբոսաշրջության կայուն զարգացման ղեկավար պրոֆ. Դիրկ Գլաեսերի հետ,
- ՄԱԿ ԶՀԿ վերլուծությունների և քաղաքականության ծրագրի տնօրեն Ջոն Կեստերի հետ,
- ՄԱԿ ԶՀԿ խորհրդական Կառլ Օբստի հետ,
- Ֆիլիպինների Հանրապետության զբոսաշրջության դեպարտամենտի քարտուղար (զբոսաշրջության նախարար) Վանդա Կորասոն Տուլֆո-Տեոյի հետ,

- Շրի Լանկայի զբոսաշրջության զարգացման նախարար Ջոն Ամարատունգայի հետ,
- Ֆիջիի արդյունաբերության, առևտրի, զբոսաշրջության, հողի և հանքային ռեսուրսների նախարար Ֆաիյազ Սադդիք Կոյայի հետ,
- Հարավային Աֆրիկայի գլխավոր վիճակագիր Պալի Լեհոհլայի հետ,
- Սեյշելյան Կղզիների Հանրապետության զբոսաշրջության, քաղաքացիական ավիացիայի նախարարության զբոսաշրջության հարցերով քարտուղար Աննա Լաֆորտունեի հետ,
- Ինդոնեզիայի Հանրապետության զբոսաշրջության նախարարի տեղակալ Այ Գդե Պիտանայի հետ,
- Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի ճամփորդական ասոցիացիայի գործադիր ղեկավար Մարիո Հարդիի հետ,
- Կորեայի Հանրապետության մշակույթի, սպորտի և զբոսաշրջության նախարարության միջազգային զբոսաշրջության քաղաքականության պատասխանատու, գլխավոր տնօրեն Հվանգ Շոնգ Ունի հետ,
- Չինաստանի զբոսաշրջության ակադեմիայի նախագահ պրոֆ. Դաի Բինի հետ,
- Օմանի վերլուծությունների և տեղեկատվության ազգային կենտրոնի տնտեսական վերլուծությունների պատասխանատու, գլխավոր տնօրեն Խալիդ Սաիդ Ալ Մուդհաֆարի հետ,
- Սաուդյան Արաբիայի զբոսաշրջության և ազգային ժառանգության հանձնաժողովի զբոսաշրջության տեղեկատվության և ուսումնասիրության կենտրոնի տեղեկատվության վարչության կառավարիչ Ֆահսալ Ալ Սալեեմիի հետ,
- Կոստա Ռիկայի զբոսաշրջության համալսարանի տեղեկատվության ադմինիստրացիայի ներկայացուցիչ Ռոքսանա Արգուեդասի հետ,
- Ֆիլիպինների վերլուծական կենտրոնի ազգային վիճակագիր պրոֆ. Լիզա Գրացե Ս. Բերսալեսի հետ,
- Պերուի միջազգային կապերի խորհրդական Կառլոս Կառեի հետ,

- Քենիայի վերլուծությունների ազգային բյուրոյի գլխավոր տնօրեն Զաչարի Մվանգի Չեգեի հետ,
- ՄԱԿ ԶՀԿ խորհրդական Իգոր Չերնիշևի հետ,
- Եվրոստատ եվրոպական հանձնաժողովի զբոսաշրջության վերլուծությունների պատասխանատու Քրիստոֆ Դեմունտերի հետ,
- Ֆիջիի ազգային և սատելիտային հաշիվների վերլուծությունների բյուրոյի գլխավոր վիճակագիր Արտիկա Դեվիի հետ,
- Աշխատանքի միջազգային կազմակերպության (ILO) վերլուծությունների վարչության տնօրեն, գլխավոր վիճակագիր Ռաֆայել Դիեզ դե Մեդինայի հետ,
- Ֆիլիպինների Կեսոն Սիթիի Արևելյան Ասիայի ծովերի բնապահպանական կառավարման համագործակցության ծրագրի ղեկավար Մարիա Կորասոն Էբարվիայի հետ,
- “INRouTe” համակարգող, “in2destination”-ի տնօրեն պրոֆ. Նագորե Էսպանիոսայի հետ,
- Մեքսիկայի աշխարհագրության ազգային ինստիտուտի սատելիտային հաշվի տնօրեն Ռաուլ Ֆիգուեռոա Դիասի հետ,
- Իսպանիայի Անդալուսիայի նահանգային կառավարության վերլուծությունների և շուկաների ուսումնասիրությունների ղեկավար, Մալագայի համալսարանի տնտեսագիտության վարչության և գործարարության ադմինիստրացիայի պրոֆեսոր Ինմակուլադա Գալլեգոյի հետ,
- Եգիպտոսի զբոսաշրջության նախարարի խորհրդական, կայուն զբոսաշրջության պատասխանատու Էմադ Հասանի հետ,
- ՄԱԿ վերլուծությունների բաժնի ծառայությունների բնագավառում միջազգային առևտրի վերլուծությունների գլխավոր մասնագետ պրոֆ. Կառոլի Կովաչի հետ,
- Բելառուսի ազգային վերլուծությունների կոմիտեի նախագահի տեղակալ Ելենա Կուխարևիչի հետ,
- ՄԱԿ ԶՀԿ վերլուծությունների կոմիտեի ղեկավար, Ավստրիայի վերլուծությունների կենտրոնի փոխտնօրեն Պետեր Լայմերի հետ,

- Ինդոնեզիայի տեղեկատվական տեխնոլոգիաների և զբոսաշրջության վերլուծությունների կենտրոնի ֆինանսական հարցերով պատասխանատու, տնօրեն Տիտի Կանտի Լեստարիի հետ,
- Չինաստանի զբոսաշրջության ակադեմիայի և տեղեկատվական կենտրոնի զբոսաշրջության վերլուծությունների ղեկավար պրոֆ. Մա Յիլիանգի հետ,
- Իսպանիայի զբոսաշրջության խորհրդի (Turespana) զբոսաշրջության բաժանմունքի փոխտնօրեն Բեատրիս Մարկո Արկեի հետ,
- "tripadvisor" ճամփորդությունների վերաբերյալ համաշխարհային կայքի մարքեթինգի ղեկավար Սառա Մեթյուսի հետ,
- Ինդոնեզիայի վերլուծությունների կենտրոնի զբոսաշրջության վերլուծությունների փոխտնօրեն Ռիֆա Ռուֆիադիի հետ,
- Կյոտոյի համալսարանի պրոֆեսոր Ակի-Հիրո Սատոյի հետ,
- ՄԱԿ ԶՀԿ վերլուծությունների և քաղաքականության ծրագրի համակարգող Կլարա վան դեր Պոլի հետ:

Հանդիպումների և քննարկումների արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվեց զբոսաշրջության վիճակագրության բարելավման և ստույգ վիճակագրական տվյալների հիման վրա բարձրորակ հետազոտությունների ու վերլուծությունների ապահովման նպատակով սատելիտային հաշվի ներդրման համար մեթոդական-տեղեկատվական աջակցություն ցուցաբերելու հարցում:

Հայկական պատվիրակության կողմից կարևորվել և մյուս պատվիրակների կողմից ընդունվել է կայուն զարգացման գնահատման, ինչպես նաև ոլորտում քաղաքականության մշակման տեսանկյունից զբոսաշրջային այցելությունների քանակի ավելացման հետ ստեղծվող աշխատատեղերի քանակի չափման և գնահատման անհրաժեշտությունը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Համաժողովի արդյունքում ընդունվեց «Կայուն զբոսաշրջության գնահատմանն ուղղված գործողությունների հայտարարություն» փաստաթուղթը:

8. Գործուղվողը՝

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝

Մեխակ Ապրեսյան

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

29 հունիսի, 2017թ.: